



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


1931

1930 - Dnepruug ak-
tiglo - 1932 par-
Meflygule yemayha-
pulaygule

Li- 1932

3KN2

Li-22.



17.09.2015

Հ39

ՏԿՊՀ

Հ-22

23 SEP 2005
1 DEC 2009

ՄՊ'

1931

1930—ՄԱՏԱԼ ՍԵՐՆԴԻՆ—1932

ԲԱՅԼԾԵՎԻԿՅԱՆ
ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համ Կ (Բ) Կ Կենտկոմի վորուստները
գպրցի յել ժողուածավորության
մասին)

34636

Գետհատ. 1932 ռւսմանկարաբանին

ՅԵՐԵՎԱՆ

ՄԱՏԱՂ ՍԵՐՆԴԻՆ

ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒ-
ԹՅՈՒՆ

(«Պրաֆելիք» ոգոստոսի 29-ի առաջ-
նորդողը)

Կուսակցության կենտրոնական կո-
միտեյի այսոր հրապարակված վորո-
շումը դպրոցի մասին՝ ունի խոշորա-
գույն հասարակական – քաղաքական
և կուլտուրական նշանակություն։ Նա
հանդիսանում է կուսակցության և
նրա կենտրոնմի կատարած խոչորա-
կույն ստուգման արդյունք՝ այն ոե-
ժիմի և ծրագրերի, վորոնցով աշխա-
տում և դպրոցը։

Կենտրոնը վողջ կուսակցության
ուշադրությունը կենտրոնացնում և
Խորհրդային Միության աճող սերնդի

կոմունիստական գաստիարակության
և կրթության հարցերի վրա:

Դեռևս 1930 թ. հուլիսի 25-ին կենտ
կոմը հանեց պատմական վորոշում
ընդհանուր, պարտադիր, նախնական
ուսուցման մասին:

Մենք համարձակորեն կարող ենք ա-
սել, վոր հաջողությամբ իրագործե-
քինք այդ խնդիրը և դրանով իսկ հա-
սանք խոչընդունակություն հաղթանակների:
Տարրական դպրոցը Խորհրդային Մի-
ության մեջ բացառությամբ հետավոր
հյուսիսի ժողովուրդների, բոլոր յե-
րեխաների համար դարձել ե պարտա-
զիր: Միայն տարրական դպրոցն այս
տարվա սեպտեմբերի 1-ին կդան Խոր-
հրդային Միության 20 միլիոն յե-
րեխաներ:

Հաղթական սոցիալիզմի յերկրի այդ
հաջողությունները տեղի յեն ունենում
կապիտալիստական հասարակության
կուլտուրական խոր անկման Փոնք
վրա, վորն իր վառ արտահայտնու-
թյունն է գանում ամենուրեք դպրոց-
ների քանակի և ուսուցչության կըր-

ճառումով: Խորհրդային Միության
և վողջ աշխարհի աշխատավորները
պետք ե դիտենան, վոր նույնիսկ
Հյուսակային Ամերիկայի Միացյալ
Նահանգներում, այդ ամենահարուստ
կապիտալիստական յերկրում անգամ,
հենց այժմ կան 4 միլիոնից ավելի 10
տարեկանից բարձր միանգամայն ան-
դրագետ յերեխաներ:

Կենտրոնական կոմիտեն յերկրորդ
վորոշումը հանեց անցյալ տարվա սեպ
տեմբերի 5-ին: Այս վորոշումը մեր
դպրոցի կյանքում հանդիսացավ շրր-
ջադարձի կետ: Կենտրոնի սեպտեմ-
բերյան վորոշումը դրսենորեց արժա-
տական պակասությունը, այն, վորձ..
ուսուցումը դպրոցում չի տայիս բա-
վարար ծավալի հանրակրթական դի-
տելիքներ և անբավարար ե լուծում
տեխնիկականների և բարձրագույն դրա-
բոցի համար միանգամայն դրագետ
մարդիկ նախապատրաստելու խնդի-
րը, վորոնք լավ տիրապետեյին դիտու-
թյան հիմքերին (Փիզիկա, քիմիա,

մաթեմատիկա, մայրենի լեզու, աշխագոհություն և այլն:

Այս վորոշումը մորիլիզացիայի յենթարկեց կուսակցական և հասարակական կազմակերպությունների ուշադրությունը՝ պայքարելու դպրոցի վորակի համար, պայքարելու լենինյան քաղաքականության ազայլազումների և աջ ոսկորսունիզմի դեմ դպրոցական ասպարիզում, վորոնք դպրոցը յետ են քաշում, և կովելու «ձախ» վուլգարականության դեմ, վոր ըստ ելության նշանակում ելուծարքի յենթարկել դպրոցը:

Սակայն ընթացիկ տարվա փորձը ցույց տվեց, վոր Կենտրոնական կոմիտեյի առաջադրած խնդիրը դեռևս լուծված չէ, դպրոցի «արժատական պակասը» դեռևս վերջնականապես վերացած չէ, վոր Կենտկոմի անցյալ տարվա վորոշման համաձայն մշակված ուսումնական ծրագրերում, դեռ կան մի շարք լուրջ բացեր, վորոնք դժվարացնում են իրագործել այն խրն-

դիրները, վորոնք առաջատարված են դպրոցին՝ կենտրոնական կոմիտեյի կողմից, բացեր, վորոնք խանգարուած են դպրոցի աշխատանքի վորակի բարձրացման:

Կենտկոմի այսոր հրապարակված վորոշումը բոլոր դպրոցներին, բոլոր լուսբաժիններին, բոլոր կուսակցական և խորհրդային կազմակերպություններին տալիս ե խորհրդային դպրոցը բարձրացնելու, յերկրորդ հնդամյակի հսկայական պահանջների մակարդակին հասցնելու գործողությունների մարտական ծրագիր, այն հնդամյակի, վոր կառուցում և անդասակարգ սոցիալիստական հասարակություն։

Վորոշման մեջ տրվում ե տարրական և միջնակարգ դպրոցների այժմ գոյություն ունեցող ծրագրերի բացերի սպառիչ քննադատություն և ծչըրիտու կոնկրետ ցույց ե տրվում, թե ինչ ուղղությամբ ե ընթանալու ծրագրերի վերամշակումը։ Կենտրոնական իդեան, վորի շուրջը համախմբվելու յեժողովրդկան լուսավորության որ-

դանների ուշադրությունը, այն եւ, վոր
ապահովվի աշակերտության բարձրու-
րակ ընդամուք կը թությունը, դժուե-
լիքսեր սիստեմատիկ դասավանդու-
մը, գիտական դիտելիքների կապը
կյանքի, ապաքարի սոցիալիստական
շրջաբարության հետ։ Վորոշման մեջ
տրվում են մի շարք կոնկրետ ցուց-
մունքներ, վոր վերաբերում են կարե-
վորագույն առարկաների ծրագրերին։
«Մայրենի լեզվի ծրագիրը, —ասվում
է վորոշման մեջ, —պետք և ապահովվի
խոկապես ճշգրիտ սահմանագծված
սիստեմատիկ գիտելիքների և հաստա-
տուն ունակությունների՝ ճիշտ կար-
գալու, դրելու և բանավոր խոսքի յուշ-
բացումը, մտցնելով աշակերտության
ուսումնական աշխատանքի պրակտի-
կայում ինքնուրույն գրավոր աշխա-
տանքներ, քերականական վարժու-
թյուններ և՝ այլն, թե՛ դասարանում
և թե՛ տանը»։

Վորոշումն առաջարկում ե՝ հաստ-
րակագիտության, գրականության,

լեզուների, աշխարհագրության և
պատմության հիմնական ծրագրերում
մտցնել կարելիրագույն գիտելիքնե-
րո, վոր վերաբերում են Խորհրդային
Միության ժողովուրդների աղդային
կուլտուրաներին։ Այս ինինյան ազ-
գային քաղաքականությունը դպրո-
ցում ճիշտ իրագործելու տեսակետից,
ունի հսկարական նշանակություն։

Վորոշումը կանդ և առնում դպրո-
ցական աշխատանքների մեթոդների
և վողջ դպրոցական ոեժիմի վրա։
Այսուղ առնում ե. «...չնարած կենտ-
կոմի ցուցմունքի...այն մասին, վոր
և վոչ մի մեթոդ չի կարող ճանաչվել
ուսուցման հիմնական և ունիվերսալ
մեթոդ, դպրոցի աշխատանքային
պրակատիկայում, իբրև հիմնական մե-
թոդ տարածվել և այսպես կոչված
«լարորատոր» բրիգագային մեթոդը»
(մի շարք դպրոցներում այս դարձել ե
ունիվերսալ) ; Վորին հետեւ և մշտա-
կան և պարտադիր բրիգագայի կազ-
մակերպումը, մի բան, վոր բերել ե
իր հետ և նեղաթյուրումներ, ինչպես

որինակ՝ դիմագրկություն ուսումնական աշխատանքների մեջ, ուսուցչի դերի թերագնահատում և շատ դեպքերում առանձին աշակերտի անհատական ուսուցման անտեսում։

Համկոմիուսի կենտկոմն առաջարկում է միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ վերացնել լարորատոր բրիգադային մեթոդի այլ աղավաղումները։ Այս նշանակում ե, վոր դպրոցը մի շարք դեպքերում վերջնականապես չի վերացրել մեթոդական պրոֆեսորության այն տարրերը, վոր նշված ելին կենտկոմի սեպտեմբերյան վորոշման մեջ։

Մամուլում արդեն հաղորդված ե, վոր այլ խեղաթյուրումները, լարորատոր բրիգադային մեթոդի կիրառման գործում, իրենց արտացոլումն են դուել նաև ՌՍՖԽ Հանրապետության լուսժողկոմատի ղեկավար դոկումենտներում։

Գետք ե ուժգին հարվածել ուսուցման մեթոդների բոլոր աղավաղումներին, իսկ մանկավարժական պրոցե-

որ կազմակերպել լիապես համապատասխան կենտկոմի ցուցմունքներին։ Ամեն կերպ պիտի ամբացնել ուսուցչի ղեկավար դերը, դասի կազմակերպումը և դասի ընթացքում դպրոցական ուսուցման բարձապիսի մեթոդների կիրառումը, յուղաքանչյուր աշակերտի գլուխելիքների անհատական և սիստեմատիկ հաշվառքը, ուսման տարվա վերջին առանձին աշակերտի ստուգիչ քննությունը, —ահա մանկավարժական պրոցեսի կազմակերպման հիմքերը դպրոցում։

Հարցը վերաբերում է դպրոցի վողջ աշխատանքի դիմագրկության վճռական վերացմանը, դասատուի և աշակերտի պատասխանավության բարձրացմանը՝ իրանց վողջ աշխատանքներում։

Կենտկոմը պարտավորեցնում է լուսժողկոմատների որդաններին՝ «գլուխցի ուսումնական վողջ աշխատանքներում անպայման ապահովել դասատվական կազմի ղեկավար դերը»։ Կենտկոմի այս ցուցումները պետք ե

անհապաղ տեղափոխվեն դպրոց և
պրակտիկ արտահայտություն գրա-
նեն նրա վողջ աշխատանքներում :

Կենտրոնի վորոշումն առանձնակի
ուշադրություն և նվիրում գլուխում
կարգ և գիսցիպլինա հաստատելուն :
Կենտրոնը դպրոցների վարիչներին և
մանկավարժներին պարտավորեցնում
և տանել համառ դաստիարակչական
աշխատանք, պայքար մղելով աշակեր-
տության այն արարքների դեմ, վո-
րոնք խախտում են դպրոցի կարգը, այս
գործին լծելով հասարակական կադ-
մակերպությունները, ծնողներին,
կոմյերիտական և պիոններական՝ կադ-
մակերպությունները, խել անուղղելի,
խուլգան, ուսուցչական կազմը վար-
կաբեկու, դպրոցի վարչության և
մանկավարժների կարգադրությունն
ու դպրոցական ուժիմը խախտող և
դպրոցական ունեցվածքը վչացնող
կամ կողոպտող աշակերտներին վտա-
րու դպրոցից՝ գրիելով նրանց մեկից
մինչև յերեք տարի ժամանակով դըպ-
րոց ստուգու իրավունքից :

Յուրաքանչյուր ուսուցիչ և դպրոցի
յուրաքանչյուր վարիչ պիտի հասկա-
նա, վոր առանց գիտակցված դիմոցիպ-
լինայի, ամուր կարգապահության,
դպրոցում չի կարելի դաստիարակել
գիտակից, դիմոցիպլինար հեղափոխա-
կան, միջազգային պլրուետարական
հեղափոխության համար պայքարող
մարտիկ :

Այս շուրջն ընդգծում և աշակերտու-
թյան թե՛ անհատական և թե կոլեկ-
տիվ ինքնուրույն աշխատանքի նշանա-
կությունը: Թեորիայի և պրակտիկա-
յի կապի ամրապնդման նպատակով
և սիստեմատիկ կերպով վար-
ժեցնել յերեխաներին ինքնուրույն
աշխատանքի, լայնորեն գործադրելով
զանազան առաջադրություններ, հա-
մաձայն աշակերտության ձեռք բերած
դիտելիքների վորոշ դասընթացի (խըն
դիրներ լուծելը և վարժություններ,
մողելներ ողատրաստելը, աշխատանք
լաբորատորիաներում, հերթարիում-
ներ պատրաստելը, մերձդպրոցական
հողամասերի ողագործում ուսում-
նաժամկետ նպատակով և այլն) :

Յելնելով այն բանից, վոր գիտելիք-
ների յուրացման վորակը, աշխատան-
քի ճիշտ մեթոդները, վորոնք ապահո-
վում են սոցիալիզմի նախաձեռնող
կառուցղների դաստիարակությունը,
կախված ե գլխավորապես ուսուցչից,
կենտկոմը «պարուավորեցնում ե դաշ-
նակից հանրապետությունների լուս-
ժողկոմատներին, խորհրդային և կու-
սակցական մարմիններին՝ ամեն կերպ
ապահովել ուսուցչին, նրա աշխա-
տանքի համար անհրաժեշտ պայման-
ներ ստեղծել, վոր նա հաջողությամբ
կատարի իր պատասխանառու և պատ-
վավոր պարտականությունները Խոր-
հրդային Սոցիալիստական Հանրապե-
տությունների Միության մատաղ սե-
րընդի ուսուցման և դաստիարակու-
թյան գործում։ Ուսուցչի գաղափա-
րական-քաղաքական ընդհանուր կըր-
թության և մանկավարժական հմտու-
թյան մակարդակը բարձրացնելու հա-
մար սիստեմատիկ աշխատանք կատա-
րել, կենտկոմի և ԽՍՀՄ-ի ժողկոմ-
խորհրդի դիրեկտիվներն անվերապահ ու

ճշգրիտ կատարել՝ ուսուցիչներին
մթերքներով և արդյունաբերական
ապրանքներով արդյունաբերական
բանվորների մատակարարմանը հա-
վասարեցնելու, աշխատավարձն իր ժա-
մանակին վճարելու, բնակարանի,
ընտանիքի և հանդստի մասին հոգալու
և նրա ամենորյա կարիքների նկատ-
մամբ ջերմ վերաբերմունք ունենալու
մասին—այս բոլորը պետք ե բնորո-
շեն, վոր կուսակցական և խորհրդա-
շեն, մարմիններն իրապես կատարում
յին մարմիններն պահպան կատարում
են կուսակցության դիրեկտիվն ու-
սուցիչների նկատմամբ լինինյան վե-
րաբերմունք ունենալու մասին։
Մահմանելով տարրական և միջնա-
կարգ դպրոցի հետագա բարելավման
դրուժնական ծրագիրը, կենտկոմի վորո-
շումը նորություն ե մացնում դպրո-
ցական կրթության սիստեմում։ Շամ-
յական պոլիտիկական դպրոցի վրա
8-րդ խմբեր կազմակերպելով՝ մենք
լիապես մոտենում ենք մեր կուսակ-
ցության ծրագրի պրակտիկ իրադրծ-

մանը՝ մինչև 17 տարեկան յերիտասարդության համար պոլիտեխնիկական գպրոց ունենալու ժամանին:

Այս հանդամանքն հնարավորություն կտա ընդլայնելու բարձրագույն գպրոցի կոնտինգենտների պատրաստումը և կվերացնի միջնակարգ և բարձրագույն կրթության միջև յեղած անհամապատասխանությունը:

Այն ժամանակ, յերբ մեր յերկիրը վերջնականացես հաստատվել եւ իր զարգացման սոցիալիստական ուղղութա, յերբ գյուղական տնտեսության մեջ մասը համախմբվել եւ կոլտնտեսություններում, յերբ կուլակությունը վրապես դասակարգ վերացվել եւ հացահատիկային կարևոր շրջաններում, յերբ յերկրի վողջ տնտեսությունը բայց էլեկտրական տեխնիկայի վերակառուցվում և սոցիալիստակ. հիմքերով, յերբ ընկ ՍՏԱԼԻՆԻ լոգունդը տեխնիկային տիրապետելու ժամանած եւ մեր առաջ իր վողջ սրությամբ, ամեր դպրոցի աշխատանքի վորակը, երբեմ մասսաների կուլտու-

րական բարձրացման և կաղըրերի պատրաստման հզոր միջոց, բացարիկ նշանակություն և ստանում:

Երեկու որից հետո վողջ Խորհրդային Միության աարբական և միջնակարգ դպրոցներում կակտվեն պարտապահունքները: 1932/33 ուսումնական տարին, վոր դուզագիտում եւ առաջին հնգամյակի ավարտմանն ու յերկրորդի սկսվելուն, պետք եւ ընթանա կենտրոմի՝ դպրոցի մասին հանած վորոշման լիտկառար իրագործման նշանանի տակ:

Կենտրոմի վորոշումը տարիս ե կոնկակավագրության մի նմուշ, վորի որինակով կուսակցական կազմակերպությունները պետք եւ պարտավոր են սովորել, թե ինչպես պիտի ղեկավարել դպրոցի աշխատանքները:

Կենտրոմի ղեկավարությամբ այս ուսումնական տարում, կուսակցությունը կոմունիստական լուսավորության Փրոնտում կերպունքության նվաճումներից

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ ՄԱՍԻՆ

(Համկումկուսի կենտրոնի 1930 թ.
հուլիսի 25-ի վորոշումը)

Սոցիալիստական շինարարության
զարգացումն ու նրա հետ կապված
կաղըերի պատրաստման հսկայական
խնդիրները, կուլտուր առեխնիքական
հետմասցության վերացումը և լայն
մասսաների կոմունիստական դաս-
տիարակությունը պահանջում են ան-
հապաղ կերպով անցկացնել ընդհա-
նուր պարտադիր տարրական ու-
սում, վորպես կուլտուրական հեղա-
փոխության հետագա զարգացման
կարևորագույն նախադրյալ:

Ծնդհանուր պարտադիր ուսման հա-
ջող իրագործումը «կլինի խոշորա-
գույն հաղթանակ վոչ միայն կուլտու-
րական, այլև քաղաքական ու տնտե-
սական ֆրոնտներում» (ՍՏԱԼԻՆ):

Զնայած այն նշանակալի ընդդըրկ-
ման ծավալմանը, վոր այժմ ունենք
տարրական դպրոցում՝ նախահեղա-
փոխական շրջանի դրության համե-
մատությամբ, կենտրոնը միանգա-
ծայն անբավարար ե գտնում ընդհա-
նուր պարտադիր տարրական ուս-
ման անցնելու նախապատրաստության
տեսպէլ:

Նշելով Խորհրդյին մարմինների,
Հայուկապես լուսաժողկոմատների, վեր-
ջիններիս տեղական մարմինների և
շատ մարզերի ու հանրապետություն-
ների դործադիր կոմիտեների թույլ
աշխատանքն ընդհանուր պարտադիր
ուսում անցկացնելու գործում, նաև
կուսակցական, պրոֆեսիոնալ ու այլ
կազմակերպությունների միանգամայն
անբավարար ուշադրությունն այս աշ-
խատանքներին, կենտրոնը անհրա-
ժեշտ և գտնում:

1. 1930/31 թ. ամենուրեք անցկաց-
նել 8 - 9 - 10 տարեկան յերեխաների
ընդհանուր պարտադիր տարրական
ուսում, այն հաշվով, վոր պարտադիր

առարկական ուսուցումն պոտջիկա
1931-32 թ. տարածվի նաև 11 տարե-
կան յերեխանների վրա :

Կենցաղային, կարգակերպչական
հասուլք գծվարաւթյունների կազմակ-
ցությամբ, թույլ տալ առանձին հան-
րապետություններին՝ քաղաքից դուրս
գտնված բնակավայրերի և առանձին
շրջանների համար վերևում նշված
պարտադիր տարրական ուսման ժամ-
կետից վորոշ նահանջ կատարել (1-2
տարվանից վոչ մենքի), յուրաքան-
չյուր դեպքում համապատասխան
դաշնակից հանրապետության կառա-
վարության թույլտվությամբ :

1930-31 թվից պարտադիր ուսում
սահմանել դեռահասների (11-15 տա-
րեկանների, տարրական դպրոցի դաս-
ընթացք չանցածների) համար, արա-
գացրած ուսուցման ձեզերի վրա հիմ-
նված յերկամյա և միամյա դպրոց-
դասընթացներ :

1930-31 թվից արդյունաբերական
քաղաքներում, Փաբրիկ-գործարանա-
յին շրջաններում և բանվորական

վաններում նախաձեռնել 7-ամյակի
սահմանում անցնելու ընդհանուր
պարտադիր ուսման, պարտադիր հայ-
տարարելով 7-ամյակի ուսումն այն
յերեխանների համար, վորոնք այս
տարի ավարտում են տարրական (1-ին
աստիճանի) դպրոցը :

Հասուլք ուշադրություն դարձնել
ֆաբրիկա - գործարանային 7-ամյակի-
ների ծավալմանը :

Ուժեղացնել կոլյերիտ դպրոցների
ծավալումը (թե ցերեկային և թե գի-
շերային) այն հաշվով, վոր հնդամյա-
կի վերջում այս դպրոցներում ներ-
գրավի կոլտնտեսական յերիտասար-
դության հիմնական մասսան :

2. Ընդհանուր պարտադիր տարրա-
կան ուսման իրագործումն ապահովե-
լու նպատակով բյուջետային հատկա-
ցումները մեծացնելու հետ միասին,
ամեն կերպ ներդրավել տնտեսական,
պրոֆեսիոնալ, կոռպերատիվ և այլ
հասարակական կազմակերպություն-
ները, նաև լայն մասսաների նախա-
ձեռնությունը՝ Փինանսավորելու ընդ-

Հանուր ռւսուցամբը (սոցմիցման, հատուկ հատկացումների կուլտ-հեկտարներից դոյացած մուտքի, շեֆերի ոգնության, աշխատանքային անվճար մասնակցության և այլն միջոցներով) :

Մահմանել, վոր տնտեսական որպանների կապիտալ խոչոր շինարարության արդֆինալաններում, համաձայն միութենական և դաշնակից հանրապետությունների ժողկոմիխորհների վորոշման, ընդհանուր ուսուցման դպրոցաշխնարարության համար կապիտալ ներդրումներ նախատեսվեն:

1930-31 թվից ընդհանուր պարտադիր ուսում անցկացնելու կապակցությամբ՝ ի հայել Համամիութենական բյուջեի զգալի չափով մեծացնել տարրական ուսման դպրոցաշխնարարության ֆոնդերը՝ հատուկ դուռացիաներով։ Այդ գոտուցիաների չափը սահմանվում է միութենական ժողկոմիխորհների կողմից՝ ընդհանուր ուսման պլանի համաձայն։

Ազատել, իր բուն նպատակին ծառայեցնելու համար, այն դպրոցական շենքերը, վոր դրազգած են այլ պետքերի համար, ինչպես նաև առաջին հերթին դպրոցի համար ոգտագործել հին կալվածատիրական շենքերը, կուլտական բունագրավված տները և այլն։

Դպրոցական շինարարության համար միջոցները ծախսելիս առաջին հերթին նկատի ունենալ հիմնական արդյունաբերական շրջանների, բանկորական կենտրոնների և համատարած կուեկտիվացած շրջանների ուրուր կուլտուրապես հետամնաց ագրային շրջանների կարիքների բավարարությը։

3. Ընդհանուր ուսման դպրոցներն անհրաժեշտ մանկավարժական կադրերով ապահովելու նպատակով՝

(ա) Շտապ կերպով ծավալել մանկինստիտուտների, մանկ տեխնիկումների, ինչպես նաև մանկավարժական հատուկ դասընթացների ու մանկա-

կարժների նախապատրաստման այլ
ձեվերի ցանցն ու կոնտինգենտը:

բ) Հաշվի առնելով ուսուցչության
վրա դրվող՝ աճող նոր խնդիրները,
նշանակալի չափով բարելավել տար-
րական ուսման մանկավարժական
կաղըների նյութական դրությունը:
Գյուղական գալրոցի ուսուցչության
համար ապահովել բանվորական մա-
տեկարարման նորմաները:

գ) Հատուկ ուշադրություն դարձ-
նել մանկավարժների մարքս-լենին-
յան պատրաստության ու նրանց պոլի-
տեխնիկական վորակավորման վրա:

Մանկավարժական կադրերում կո-
մունիստական և բանվորական կորիգն
ուժեղացնելու համար միջոցների դի-
մել:

Առաջարկել կոմյերի տմիության
կենտկոմին՝ յերեք տարի չարունակ,
մորիլիգացիայի կարգով, յուրաքան-
չյուր տարում 20.000 ՀամԼԿՅԵՄ ան-
դամներ առանձնացնել և ուղարկել
բնականուր ուսուցման դպրոցներում

աշխատելու և մանկության արկների
համալրման համար:

4. Դպրոցի իրական մատչելիու-
թյան, ուսուցման վարակի բարձրաց-
ման և յերկրորդ-տարեցիների ու
մաղման դեմ տարրական դպրոցում
պայքարելու նպատակով՝ 1930 31 թ.
զգալի չափով ուժեղացնել աշակեր-
տությանը, քիչ ապահովված բանվոր-
ների յերեխաներին, բատրակների և
չքավորների յերեխային տրվող նյու-
թական ոգնությունը (ձրի ուսումնա-
կան պիտույքներ, վոտնամաններ, հա-
զուստ, սնունդ և փոխադրության մի-
ջոցներ հայթայթելու միջոցով) բյու-
ջետյին հատկացումներն ավելացնե-
լու, հասարակակն կազմակերպու-
թյունների միջոցները ներգրավելու,
ինչպես նաև միութենական ժողկոմ-
խորհի սահմանած և հատկապես այդ
նպատակի համար գոյացած Փոնդերի
միջոցների հաշվին։ Միաժամանակ՝
կուլտարչակների կարգով լայնորեն
ծավալել նախապատրաստական խօժ-
բերի և բանվորների, բատրակների ու

չյուղական չքայլորների յերեխաների
հետ պարապելու պլրակտիկան :

5. Կենտկոմն ընդհանուր ուսման
գործադրումը նախապատրաստելու
գործում կուտազմակերպությունների
դեկավարությունն ուժեղացնելու նպա
տակով՝ առաջարկում ե բոլոր կուտ-
կազմակերպություններին .

ա) Ընդհանուր պարտադիք տարրա-
կան ուսման գործին նայել, իրեւ մո-
տակա ժամանակաշրջանի համար կա-
րեվորագույն քաղաքական կամպա-
նիայի :

բ) Ապհովել կուսանդամների սիս-
տեմատիկ և ակտիվ մասնակցությունն
ընդհանուր պարտադիք ուսման ոժան-
դակ կոմիտեների և դպրոցի ընտրա-
կան կազմակերպությունների (դպրո-
ցական խորհուրդներ, յերեխաներին
ոժանդակող խորհուրդներ, ծնողական
կոմիտեներ և այլն) աշխատանքներին :

դ) Կուտակոմները վոչ ուշ, քան տա-
րեկան յերկու անգամ, լսելու յեն
գործկոմների Փրակցիաների և խոր-
հուրդների գեկուցումներն՝ ընդհա-

նուր ուսում անցկացնելու աշխա-
տանքների ծավալման մասին :

կոմբինատիվ ընդհանուր ժողովնե-
րում սիստեմատիկ կերպով դնել ընդ-
հանուր պարտադիք ուսում անցկաց-
նելու հարցերը՝ համաձայն տեղական
պայմանների (Փար. գործ. շրջանի,
ավանի, գյուղի):

6. Ընդհանուր պարտադիք տարրա-
կան ուսման իրագործումն ամենա-
կարծ ժամանակամիջոցում՝ կապված
է մի շարք խոշորագույն դժվարու-
թյունների հետ: Այդ դժմվարություն-
ների վճռական վերացումը կարելի
յե ձեռք բերել այն դեպքում միայն,
յերբ ընդհանուր ուսման գործը կդառ-
նա մասսայական հասարակական-քա-
ղաքական կամպանիա, վոր հենված և,
վողջ պրոլետարական հասարակայ-
նության ձեռներեցության և ինքնու-
րույնության վրա և աշխատանքի այն-
պիսի մեթոդների լայն ոգտագործման
վրա, ինչպես կուտարշավն և, սոց-
մրցումը, ձեռնարկության չեֆությու-
նը, հասարակական ստուգատեսները,

մասսայական կոնֆերանսները և այլն:

Ընդհանուր ուսման իրագործման աշխատանքներում միջոցներն ու ուժեղը մոբիլիզացիայի յենթարկելու նպատակով, Կենտկոմն անհրաժեշտ է համարում քաղաքորհուրդներին, գյուղխորհուրդներին և գործկոմներին ու ֆարմառաբանային ավաններին կից ընդհանուր սպարտադիր ուսմանն ուժանդակող կոմիտեներ ստեղծել՝ լուսաբաժնների, պրոֆ. կաֆմակերպությունների, կոմիերիտմիության, Կանլի, Մանկության բարեկամների ընկերության, առաջավոր բանկուների և կոլտնտեսատկանների, ակտիվ կուլտուրնիկների մասնակցությամբ: Կենտկոմն առաջարկում է կենտրոնական և տեղական մամուլին՝ ընդհանուր պարտադիր ուսումն անցկացնելու հարցերի մասին լայն կամպանիա ծավալել՝ սիստեմատիկորեն լուսաբանելով այլ աշխատանքների ընթացքը:

ՏԱՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊԲՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԿ (Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Ընթանալով կոմունիստական կուսակցության ծրագրի իրականացման ուղիղով, վորի համաձայն «դպրոցը պետք է լինի վոչ միայն կոմունիզմի ոկզրունքների տարածողն ընդհանրապես, այլև նրա գաղափարի, պրոլետարիատի կազմակերպչական ու դաստիարակչական ազդեցության տարածողն աշխատավոր մասսաների կիսապրոլետարական և վոչ պրոլետարական խովերի վրա՝ կոմունիզմը վերջնականապես հաստատելու ընդունակ սերունդ՝ գտառիարակելու նպատակով» (Համ. Կ(Բ)Կ-ի ծրագիրը), պրոլետարական պետությունը հակայական հաջողություններ և ձեռք բերել դպրոցական ցանցի ընդարձակման և դպրոցների վերակա-

ռուցման թեագավառում։ Տարրական
և միջնակարգ դպրոցներում սովո-
րողների թիվը 1914 թվականի 7.800
հազար հոգուց 1931 թվականին հա-
սակ 20 միլիոն հոգու։ Արմատավեռ
փոխվել ե դպրոցների սոցիալական
կազմը։ Բանվորների և գյուղի աշխա-
տավոր լայն մասսաների յերեխանե-
րը, վորոնք առաջ հնարավորություն
չունելին ոռվորելու դպրոցում, այժմ
հանդիսանում են դպրոցի հիմնական
աշակերտությունը։ Մայրենի լեզվագ
ուսուցումն ընդգրկել ե Խորհրդային
Միության կուլտուրապես ամենա-
հետամնաց ժողովուրդներին և գոր-
ծադրվում ե 70 լեզվով։

Սկզբունքորեն միանգամայն փախ-
վել ե դպրոցի ամբողջ աշխատանքի
բռվաճակությունը։

Խորհրդային դպրոցը, վորի նպա-
տակն ե «կոմունիստական հասարա-
կության համար պատրաստել բազմա-
կողմանի կերպով զարգացած անդամ-
ներ», յերեխաներին տալիս ե անհամե-
մատ ավելի լայն հասարակական-քա-

զաքական տեսածիր և ընդհանուր
զարգացում, քան նախահեղափոխա-
կան բորժուական դպրոցը։

Վերջին տարիներում բարձրացել ե
խորհրդային դպրոցի յերեխաների
ընդհանումը կրթության ժակարդակը։

Դպրոցն առանձնապես կարևոր նը-
վաճումներ կատարեց մասնավորա-
պես կուսակցության 16-րդ համա-
գումարի՝ ընդհանումը պարտադիր
ռւսման մասին հանած պատմական
վորոշումից հետո։

Միայն այս վերջին տարվա ընթաց-
քում սովորողների թիվը տարբական
և միջնակարգ դպրոցներում 13,5
միլիոնից հասակ 20 միլիոնի։ Բացի
այդ, Փարզործուներում ու տեխնի-
կումներում ընդդրկվեցին 1.400 հա-
զար սովորողներ։

Դպրոցական հասակի յերեխաների
պարտադիր ռւսման իրագործման
վճռական քայլերի հետ մեկտեղ, զգա-
լի առաջխաղացում կատարվեց դըպ-
րոցական ուսուցման և արտադրական
աշխատանքի միջև կապ ստեղծելու

գործում և հասարակական աշխատան
ֆի ասպարիզում, վորի շնորհիվ դըր-
ված են արդեն դպրոցի վերակառուց-
ման հիմքերը պոլիտեխնիկմի բազա-
յի վրա :

Թեպետ թվով անբավարար և տեխ-
նիկապես դեռևս թույլ սարքավոր-
ված, արհեստանոցների քանակի ա-
վելացումը, դպրոցները գործարան-
ներին, խորհանուեսություններին,
ժեղենատրակտորային կայաններին,
կոլտնտեսություններին տմբացնելու
հետ միասին Հնարավարությունն և
տալիս ովելի ու ավելի լայն ծավա-
լելու և տրագորին իրազործելու դըպ-
րոցի ողոլիւթենիկացումը :

Սակայն չնայած այդ բոլոր նվա-
ճումներին, կենտկոմն արձանագրում
է, վոր խորհրդային դպրոցը դեռ-
և հեռու յե այն ահազին պահանջնե-
րը բավարարելուց, վոր առաջա-
դրում է նրան սոցիալիստական շե-
նորարության այժմյան ետապը :

Կենտկոմը դպրոցի արմատական
քերությունը ներկա մոմենտում

գտնում է այն, վոր ուսուցումը գրա-
րոցում չի տալիս բավարար ծավալի
հանրակրթական գիտելիքներ և ան-
բավարար կերպով ե լուծում տեխնի-
կումների ու բարձրագույն դպրոցի
համար միանգամայն գրագետ մար-
դիկ պատրաստելու խնդիրը, վորոնի
լալ տիրապետությին գիտությունների
հիմքերին (Փիզիկա, քիմիա, մա-
թեմատիկա, մայրենի լեզու, աշխար-
հագրություն և մի շարք այլ գիտելիք
ներ) : Դրա հետեւանքով դպրոցի պոլի
տեխնիկացումը մի շարք դեպքերում
առանում է ձեւական բնույթի և չի պատ-
րաստում ուղիղիզմի բազմակողմա-
նի զարգացած շինարարներ, վորոնչ
կարողանան կապակցել թեորիան
արակտիկային և աիրապետեն տեխ-
նիկային :

Ամեն մի փորձ, վորի նպատակը
կլիմի դպրոցի պոլիտեխնիկացումն
անցաւել գիտությունների և մանա-
կանդ Փիզիկայի, Քիմիայի ու մաթե-
մատիկայի սիստեմատիկ հասու-
լում յուրացումից, վորոնց ավան-

դումը պետք ե գրվի խստիվ վորոշված և ուշի ուշով մշակված կրթուկան պլանների ու ծրագրերի հիման վրա և կոտարվի համաձայն խոտիվ ռուրոշված գյասացուցակների, —վոչ ոյլ ինչ ե, բայց յեթե պոլիտեխնիկ դպրոցի գաղափարի ամենակուպիտ աղավաղում : «Կոմունիստ կարելի յերանալ միայն այն ժամանակ, յերեկ հՀարստացնես հիշողությունդ այն բոլոր գիտելիքներով, վոր մշակել ե մարդկությունը» (Լենին, 25-րդ հատոր, 388 էջ) :

Դպրոցի ամբողջ հետագա աշխատանքի հիմքում կենտկոմն առաջարկում ե զնել այն ցուցումները, վոր տվել ե Լենինը գետես 1920 թին : Ընդգծելով, վոր չէ կարելի պոլիտեխնիկացման հարցերը զնել վերացական որեն, վոր այդ հարցերը հարկավոր ե լուծել կուսակցության առաջ կանգնած կոնկրետ խնդիրների հետ սերտ որեն կապակցված, Լենինը մատնանշում է (Լենինի գիտողությունները Ն. Կրուսլսկայայի պոլիտեխնի-

կացման կրթության վերաբերյալ թեղիսների մասին), վոր անհրաժեշտ ե .

1. Խուսափել վաղ մասնագիտացումից և մշակել հրահանդ այդ մասին :

2. Բոլոր պրոֆտեխնիկական դրաբոցներում ընդարձակել հանրակրթական առաջարկաները :

3. Անպայման առաջադրանք դարձնել անմիջական անցումը գեեցի պոլիտեխնիկ կրթություն, կամ, ավելի ճիշտ, անհապաղ իրականացում մի շարք, հենց այժմ իսկ մատչելի քայլերի՝ պոլիտեխնիկ կրթության ուղղությամբ...

Մեզ հարկավոր են առաջազրություններ, փականագործներ իսկույն ենթ : Անպայման : Բոլորը պետք են դառնան առաջագործներ, փականագործներ և այլն, բայց գրան ավելացնելով հանրակրթական պոլիտեխնիկի մինիմումը :

Ցերկրորդ աստիճանի դպրոցների, ավելի ճիշտը՝ յերկրորդ աստիճանին բարձր խմբերի խնդիրն ե՝ տալ իր

գործը լիովին իմացող, վարպետ դառնալու միանդամայն ընդունակ, փոխարինելու պատրաստ, պրակտիկ կերպով այդ գործի համար պատրաստ առաջնագործ, հյուսն, մականագործ և այլն, սահայն այն պայմանով, վոր արդ «արհեստավորն» ունենալ լայն ընդհանուր կրթություն և իմանա այսինչ ու այնինչ գիտությունների (ճշտիվ մատնանշել՝ ինչ գիտությունների) մինիմումը, լինի և կոնոմիստ (վորոշակի ասել, թե ի՞նչ պետք է իմանա), ունենա պոլիտիկանիկ տեսածիր և պոլիտիկանիկ կրթության տարերքն ու հիմունքները:

Այն ե՝

ա. Հիմնական հասկացողություններ (ճշտիվ վորոշել՝ ինչ հասկացողություններ) ելեկտրականության մասին:

բ. Ելեկտրականության գործադրությունը միևնակական արդյունաբերության մեջ:

գ. Նույնը քիմիականի ասպարիգում:

դ. Նույնը՝ ԱՄֆիլ ելեկտրոֆիկացիայի պլանի մասին:

ե. Վոչ պակաս քան 1 3 անդամ այցելի ելեկտրակայան, գործարան, խորհունակություն:

զ. Իմանա ագրոնոմիայի այսինչ հիմունքները և այլն, մանրամասնուրեն մշակել գիտելիքների մինիմումը:

Այս բոլորից յենելով, ՀամԿ(Բ)Կ կենտրոնը վորոշում ե.

I. ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ-ՆԵՐԸ

Առաջարկել դաշնակից հանրապետությունների լուսողկոմատներին անմիջապես կազմակերպել ծրագրերի գիտական-մարքսիստական մշակումը՝ ապահովելով այդպիսի ծրագրերով սիստեմավորված գիտելիքների նշուիլ վորոշված գումարը (մայրենի լեզու, մաթեմատիկա, Փիզիկա, Քիմիա, աշխարհագրություն, պատմություն) այն հաշվով, որ 1922 թվի

Հունվարի մեկից դասավանդումն
սկսվի վերանայված ծրագրերի հիման
վրա :

Սրագրերը վերանայելու հետ միա-
սին, կուսածողկոմատը պետք է ձեռք
առնի մի շարք միջոցներ, վորոնք
կապահովեն նոր ծրագրերով դասա-
վանդելու խական հնարավորու-
թյունը (ուսուցիչների հրահանգա-
վորութ, համալսարանախան ցուցում-
ների հրատարակութ և այլն):

Կիրառելով խորհրդային դպրոցում
ուսուցման գանձան նոր մեթոդներ,
վորոնիկ կարող էն նպաստել սոց-
շինարարության ձեռներեց, գոր-
ծունեյա մասնակիցներ դաստիա-
րակելու գործին, միաժամանակ ան-
հրաժեշտ և ծավալել վճռական պայ-
քար ընդդեմ քերեամբ մերոդա-
կան պրոֆեսորության, ընդուն-
դորձնականում նախորոք չստուգիամծ
մեթոդների մասսայական գործա-
դրման, մի հանգամանք, վոր առանձ
նապես ցայտում կերպով յերկատն յե-
կազ վերջին ժամանակներս այսպես

կոչված «պրոեկտների մեթոդի» կերպում ան միջոցին : «Դպրոցի մահաց ման» հակալենինյան թեորիա- չից բղխող փորձերը՝ ամբողջ դպրո- ցական աշխատանքի հիմք դարձնել այսպես կոչված «պրոեկտների մեթո- դը»— փաստորեն առանում ելին զեպի դպրոցի կործանում :

կենտկոմը պարտավորեցնում է
դաշնակից Հանրապետությունների
լուսադողկոմատներին՝ անմիջապես
կազմակերպել և պատշաճ բարձրու-
թյան վրա դնել գիտահետազոտա-
կան աշխատանքը, այդ աշխատանքի
համար գործի կանչել լավագույն
կուսակցական ուժերին և վերակա-
ռուցել այդ աշխատանքը վորոշակի
մարքսիստական-լենինյան ոկզրուն-
ներով:

Նկատի ունենալով այս հանգամժամ-
քը, վոր կոմունիստական դաստիթ-
րակության բազկացուցիչ մասն և
կազմում պոլիտեխնիկ կրթությունը,
վորը պետք է տա սովորողներին «գի-
տությունների հիմքերը», ծանոթաց-

Նի Նըանց «Յեսրիայում և պրակտիկայում արտադրության բոլոր գլխավոր ճյուղերին» կիրառի «ուսման սերտ կապն արտադրական աշխատանքի հետ», —առաջարկել զաշնակից Հանրապետությունների լուսժողկոմատներին 1931 թ. ընթացքում լայնորեն ծավալել զպրոցներին կից արհեստանոցների և աշխատանքի սենյակների ցանցը, կապակցելով այդ դործը պայմանագրերի հիման վրա զպրոցները ձեռնարկություններին խորհանություններին և կոլտնտեսություններին ամրացնելու գործի հետ:

Ուսուցման միացումն արտադրական աշխատանքի հետ անհրաժեշտ և սուուգել այն հիմունքով, վոր սովորողների ամրող հասարակական-արտադրական աշխատանքը յենքարկված լինի դպրոցի կրթական ու դաստիարակչական նպատակներին:

Ձեռնարկություններին, խորհանութեանություններին, ՄՏ կայաններին և կոլտնտեսություններին առաջարկ-

վում եւ ցույց տալ Լժկոմատներին ամեն տեսակի ողնություն՝ այս խնդիրը լուծելու, զատելով դպրոցական արհեստանոցների ու լաբարատորիաների համար անհրաժեշտ սարքավորում՝ ու գործիքներ, զատելով վորակյալ բանկորներ ու մասնագետներ, վորոնք անմիջապես պետք ե մասնակցեն դպրոցի աշխատանքին, ողնելով մանկավարժներին արտադրության ուսումնասիրության գործում և այլն։

Դանակից հանրապետությունների լուսժողկոմատներին առաջարկվում է՝ յուրաքանչյուր շրջանում և բոլոր քաղաքներում ստեղծել որինակելի դպրոցների ցանց, գնելով այդ դպրոցներն ավելի բարենպաստ նյութական պայմանների մեջ և կենտրոնացնելով այդտեղ լավագույն մանկավարժական ուժերն այն հաշվով, վոր ուսուցչական մասսաները, բանկորները, կոլտնտեսականները և սովորողները կարողանան գործնականում սովորել այդ դպրոցներում պո-

լիտերնիկ դպրոցի շինարարությունը :

Դպրոցի պովիտեխնիկացմանը նրա պատճենու նպատակով դաշնակից համբաւետությունների լուսժողկոմատներին առաջարկվում է 1931—32 ուսումնական տարում ստեղծել փոքրիկ պոլիտեխնիկ քանիքարաններից, ինչպես նաև հասուկ պովիտեխնիկ բաժիններ՝ գոյություն ունեցող գավառագիտական թանգարան ներին կից։ ԺԳԾԽ-ին առաջարկվում է ցույց տալ Փինանսական և կազմակերպչական աջակցություն՝ այս ձեռնարկումը կիրառելու համար։ Լուսժողկոմատները, պետական հրատարակչությունների հետ միասնաբար, պետք է ստեղծեն տիպարային պոլիտեխնիկ գրադարաններ աշակերտների և մանկավարժների համար, նրանց մայրենի լեզվով։ Լուսժողկոմատներին առաջարկվում է կինոկազմակերպությունների հետ միասնաբար մշակել ձեռնարկումներ՝ ոգտագործելով կինոն դպրոցի, մանա-

վանդ նրա պոլիտեխնիկացման համար։

Սոցիալիզմի շրջանում, յերբ պրակտիկատն իրագործում է դասակարգերի վերջնական վոչնչացումը՝ ուղղված դասակարգային պայքարի պայմաններում, բացառիկ կարեռը նշանակություն և ստանում կուռ կոմունիստական դաստիարակությունը խորհրդային դպրոցում, պայքարի ուժեղացումն ընդլիւմ ամեն տեսակ փորձերի, վորոնց նպատակ կունենան պատվաստել խորհրդային դպրոցի յերեխաներին հակապրոլետարական իդեոլոգիայի տարրեր։

Այս կապակցությամբ, կենտկոմն առաջարկում է կուսակցական կազմակերպություններին ամրացնել դպրոցի ղեկավարությունը և անմիջապես հսկողության տակ առնել հասարակական քաղաքական դիսցիլիպների դասավանդման դրվագածքը 7-ամյակներում, մանկավարժական տեխնիկումներում և մանկավարժական ԲՈՒՀ-ի բում։

Պնդելով կե-ի ընդհանուր պարտագիր
 և ամսական կրթության վերաբերյալ
 1930 թվի հուլիսի 25-ի վրոշումը
 բահմանված ժամկետին իրազրծելու
 անհրաժեշտությունը, կենտրոնական
 կոմիտեն, նպատակ ունենալով շատ
 քաղաք կենսագործելու կուսակցու-
 թյան ծրագրի պահանջները բոլոր յե-
 րեւիսների և մինչև 17 տարեկան ան-
 շափահասների ընդհանուր պոլիտեխ-
 նիկ կրթության մասին առաջարկում
 և ԽՍՀՄ ժողկոմի մորհին՝ մշակել
 քննիանուր պարտադիր 7-ամյա կըր-
 քության ծրագիր։

II. ԴՊՐՈՑԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՂԵԿԱ- ՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Մատնանշելով այն վաստը, վոր-
 թպրոցների մեթոդական ղեկավարու-
 թյուն կազմակերպելու համար ժողո-
 վական կրթության մարմիններում
 անդամական կադրերն անբավարար են,
 պահանջման առաջարկում և կուտազը

ովին՝ լուսժողկոմատների և ազգային
 կոմիտուների կենտրոնների կուլտուր-
 ության մեջ մեամսնաբար, մի ամս-
 վա ժամանակամիջոցում մշակել ժեռ-
 նարկումներ՝ ծովովրդական կրթու-
 թյան մարմիններում մեթոդական ազ-
 խատանք կատարող մարքսիստական-
 ւնինյան կադրեր պատրաստելու հա-
 մար և ամրապնդել մեթոդական ղե-
 կավարության ղեկավար ողակները
 կուսակցական լավագույն թեորետի-
 կական ու մանկավարժական ուժե-
 րով։

Նշելով գիտա-հետազոտական հիմ-
 նարկությունների գդալի կորիզածու-
 թյունը մանկավարժության բնագա-
 վառում դպրոցի գործնական ինդիբ-
 ներից, Համկ(բ)կ կե դաշնակից հան-
 րապետությունների լուսժողկոմատ-
 ներին առաջարկում ե՝ համապա-
 տասիսն հետազոտական ինստիտուտ-
 ների աշխատանքը կենտրոնացնել գլո-
 բավարապես ուսումնասիրելու, և
 ընդհանրացնելու այն փորձը, վոր-
 թպրակել են դպրոցի գործնական

աշխատողները, մանավանդ սլուի-
տեխնիկացման վերաբերմամբ:

Պարտավորեցնել դաշնակից հան-
րապետությունների լուսժողկոմատ-
ներին, տեսած ըրջանալին ողակներից,
ժողովրդական կրթության մարմին-
ների սիստեմների մեջ մտցնեն հրա-
հանգիչների ինստիտուտ՝ ուսուցչին
իր ամենորյա դպրոցական աշխա-
տանքներում մշտական պրակտիկ ող-
նություն ցույց տալու համար։ Ինս-
տրուկտորների կազմը համալրել փորձ
ված, դպրոցն ու նրա խնդիրները լավ
խմացող ուսուցիչներով, տալով յու-
րաքանչյուր ըրջանին առնվածն յեր-
կու հրահանգիչ։

Պարտավորեցնել ժողովրդական
կրթության ասպարիգում դեկավաք
աշխատանք կատարող բոլոր կոմու-
նիստներին՝ ամենակարև ժամանա-
կամիջոցաւմ տիրապետել դպրոցական
աշխատանքի մերողական կողմին։

Կոմունիստական Ամերիմիային կից
ժարքսիստ մանկավարժների ընկերու-
թյան առջև խնդիր դնել՝ մշտակելու

լուսժողկոմի առաջադրանքների հա-
մաձայն՝ ուսուցչին իր ամենորյա աշ-
խատանքում ցույց տրվելիք մեթոդա-
կան ոգնության հիմնական հարցե-
ըլ։

Վերանայել մանկավարժության
հարցերին նվիրված՝ գոյություն ու-
նեցող պարբերական հրատարակու-
թյունները, նպատակ ունենալով նը-
րանց վորամկի վճռական բարելավու-
մը և ըրջադարձը՝ յերեսը դեպի դըպ-
րաց, դեպի նրա պահանջները, պար-
տավորաբար խմբագրական ապարա-
տի մեջ մտցնելով ուսուցչէներին։

III ԿԱԴՐԵՐ

Ուսուցիչների ըրջանում կատարե-
ալք աշխատանքների ընթացքում պիտք
է զեկավարվել այն ցուցումով, վոր-
տմել և կեննիր դեռևս 1922 թվին՝
«Ժողովրդական ուսուցիչը մեզ ժող-
ութեատք և կանգնած լինի այսպիսի բարձ-
րության վրա, վարպիսի բարձրու-
թյան վրա նա յերբեք չի կարող կանգ-

նել բորժուական հանարակության մեջ՝ (Լենին, հասոր 18, մաս 2-րդ, էջ 15): Հաշվի առևելով այն համոզամանը, վոր ընդհանուր պարտադիր կրթության իրականացման կատակեցությամբ աճել և մանկավարժական կազմերի և նրանց վորակի բարձրացման պահանջը, առաջարկել ԽՍՀՄ Պետպահնեն և գաղտնակից հանրապետությունների լուսժողկոմատներին՝ յիրկու ամսվա ժամանակամիջոցում կազմել ստորին և միջնակարգ գպրոցներին անհրաժեշտ ուսուցիչների պահանջը լիովին ապահովող մանկավարժական կազմերի պատրաստման պլանը և ներկայացնել ԽՍՀՄ-ի ժողկոմիություն։

Կազմակերպել ուսուցիչների ծանոթացումը արտադրության հիմքերին՝ դորժարաններում, խորհանություններում, ՄՏ կայաններում և կոլտնաներում այն հաշվով, վոր 1931--32 թվի ընթացքում այդ ծանոթացումն ընդգրկի դասաւուական բոլոր կադրերը։

ԽՍՀՄ Հողժողկոմատներին առաջարկ վում ե՝ ազգունումների պատրաստման գպրոցների կոնտինդենտը սահմանելիս հաշվի առնել կոլտնտեսական յերիտասարդության գպրոցների պահանջը, ինչպես նաև ոգնություն ցույց տալ ժողովրդական կրթության մարմիններին՝ արտադրության մեջ ըդրադրված ազգունումիական ուժերը կողմերիտ գպրոցներում աշխատանքի կանչելու գործում։

Քոյոր ինդուստրիալ գյուղատնեսական ԲՈՒՀ-երում մտցնել դպրացի պղկիտեխնիկացման աշխատանքի մերժութեան և արտադրական տեխնիկական կրթության գրվածքի ծանոթացում։

Առաջարկել Համ. ԽՍՀՄ կենտկոմին և դաշնակից հանրապետությունների լուսժողկոմատներին՝ մշակել հատուկ ձեռնարկումներ՝ սիխոներ զերկագարների ընտրության, նրանց իրենց աշխատանքին ամբացնելու, նըրանց ընդհանուր և հատուկ մանկա-

վարժական վորակի բարձրացման վեհաբերյալ, պիոներ զեկավարներին համարելով՝ մանկավարժական նոր կազմեր պատրաստելու արժեքագործ ուղերդ :

Հանձնարարել Պետաղանին, Ֆին-ժողկոմատին, Հուսաչխի Կենտրոնին և դաշնակից Հանրապետությունների լուսժողկոմատներին՝ 10 որիա ժամանակամիջոցում մշակել ձևոնարկումները տարրական և միջնակարգ դպրոցների ուսուցչության աշխատավարձիքի բարձրացման վերաբերյալ:

Հուսաչխի Միության Կենտրոնին առաջարկվում է՝ դաշնակից Հանրապետությունների լուսժողկոմատների հետ միասին մի ամսվայ ժամանակամիջոցում մշակել ուսուցիչների աշխատանքի դիմերենցիալ վարձատրության սիստեմ՝ բատ շրջանների, կվառֆիֆեկացիայի և աշխատանք՝ վորակի: Ուսուցիչներին մնագամթերք և արդյունաբերական ապրանք մատակարարել՝ քաղաքներում և արդյունարեական շրջաններում պետք և լի-

նի բանվորական փակ-բաշխիչներին և ճաշարաններին կցելու միջոցով, ընդ վորում՝ արդյունաբերական բանվորների նորմաներով: Կոլտնտեսություններում ուսուցիչներին պարենագործան մթերքներ մատակարարել կոլտնտեսությունների պարենագործան Փոնդերից, տվյալ շրջանի արդյունաբերական բանվորների նորմաներով: Գյուղական ուսուցիչներին արդյունաբերական ապրանքներ և արդյունաբերական արտադրության մըթերքներ, ինչպես նաև դեռևս կոլտնտեսություն չունեցող գյուղերում ուսուցիչներին պարենագործան մըթերքներ մատակարարել կենտրոնացված մատակարարման Փոնդերից տվյալ շրջանի արդյունաբերական բանվորների նորմաներով:

Ուսուցչության շրջանում կատարվող բալոր աշխատանքներում լայնութեն ծագալել սոցմբցությունն ու հարկածայնությունը, ամեն կերպ խրախուսելով հարվածային ուսուցիչներին:

VI. ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Նշելով, վոր դպրոցների նյութական բաղան՝ նոր չենքերի կառուումը, յեղածների վերանորոգումը, դպրոցական սարքավորման և ուսումնական պիտույքների արտադրանքը, վերին աստիճաննի անբավարար և կ դպրոցի աշխատանքների լավացման խոչնորածներից մեկն եւ . դառնում, Կենտկոմն առջարկում եւ Միութենական Պետականին՝ մշակել դպրոցական նոր չինարարության հնդամյաններն առաջարկում եւ ուսումնական պիտույքների պատրաստող արդյունաբերական համամիտուրենական միավարում, 2 ամսմայական ընթացքում քննել այդ միավորման արտադրական պլանը, այն հաշվով, վոր 1932 թվին թե՛ տարրական և թե միջնակարգ դպրոցների հիմնական աշխատանքների ակավելը:

Դպրոցական չենքերի փոնդի լարացման նպատակով կենտկոմն առաջարկում եւ տեղերի կուսակցական և խորհրդային կազմակերպություններին ապահովել մինչ այժմս չպարզված նախկին դպրոցական շենքերի

հանձնումն ու կուլակներից գրավված տների ողբագործումը դպրոցներէ համար :

Անհրաժեշտ ե լայնորեն դրավել կուտանտեսությունների նախաձեռնությունն ու միջոցները, դպրոցի նյութական բաղայի և ուսուցչության ապահովման բարելավման համար :

Առաջարկվում ե Ժողոտնախորհին՝ սեղծել ուսումնական և դպրոցական արբավորում և ուսումնական պիտույքների պատրաստող արդյունաբերական համամիտուրենական միավարում, 2 ամսմայական ընթացքում քննել այդ միավորման արտադրական պլանը, այն հաշվով, վոր 1932 թվին թե՛ տարրական և թե միջնակարգ դպրոցների հիմնական զանգվածը մատակարարված լինի ուսումնական սարքավորման մինիմումով :

Առաջարկել դաշնակից հանրակետությունների լուսադողկոմատներին՝ մեկ ամսմայական ընթացքում մշակել ուսումնական պիտույքների ու պոլիտեխնիկական սարքավորման ստան-

պարտներ և համապատասխան հայտներկայցնել ժողոտնագերխորհին:

Առաջարկել Միութենական ժողոտգերխորհին՝ դպրոցներին հանձնել ձեռնարկությունների համար վոչ ոգ տազործելի և դպրոցական արհեստանոցների աշխատանքի սենյակներին պիտանի դաշդյահները, գործիքներն ու զանազան մնացորդներ (խոտանք, ջարդ կտորտանք):

Առաջարկել դաշնակից հանրապետությունների ժողկոմխորհներին, յերկրային և մարզային գործկոմներին և արդկոոպերացիայի որդաններին կարճ ժամանակամիջոցում տեղերակ կազմակերպել մասսայական դպրոցի ստումբնական սարքավորման ու պիտույքների արտադրությունը, այդ նպատակով ոգտագործելով տեղական միջոցները:

V. ԴՐՈՅԻ ԿՈՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Արձանագրելով դաշնակից հանրապետությունների լուսավողկոմատների
54

կողմից վերջին տարիներում ձեռքբերված հաջողություններն իրենց ամբողջ կազմակերպչական աշխատանքի վերակառուցման ասպարիզում, կուսակցության կենտրոնն ընդդում ե, սակայն դպրոցի աշխատանքի վորակի բարելավումն անհնարին ե առանց դպրոցի դեկավարության վերակի վճռական բարձրացման լուսժողկոմատներմիների կողմից և առանց արագագույն անցման դեպի նրանց գործական կոնկրետ գիֆերենցիալ դեկավարությունը՝ հաշվի առնելով առանձին մարզերի, ըրջանների ազգային առանձնահատկությունների և այլն տնտեսական ու քաղաքական նըսանակությունը և ժողովրդական կրթության բոլոր ողակներում դիմագրկությունը բացասով խփութ սահմանելով հանձնարարված աշխատանքի համամատական պահանջում ե ժողովրդական կրթության բոլոր մարմիններից նոր ձեռի աշխատանք ու դեկավարություն՝ համեմատ աճած կատարություն սահմանելով, վոր առաջանջների, վոր առաջադրում ե

Դպրոցին ժողովրդական անտեսության սոցիալիստական վերակառուցմբ:

Կենտկամն առաջարկում ե զաշնակից հանրապետությունների լուսաղկամատներին՝ վճռաբար վերակառուցել ժողովրդական կրթության մարմինների ղեկավարության պրակտիկան, դարձնելով այդ ղեկավարությունն իսկապես գործառնական ու դիմերենցիալ, կենտրոնացնելով ուշադրությունը կարեվորագույն արդյունաբերական շրջանների (մետաղ, ածուխ, նավթ և այլն), խորհանութեալությունների ՄՏ կայանների, համատարած կոլեկտիվացման շրջանների և նոր շինարարությունների վրա: Անհրաժեշտ է վերացնել «հավասարարական» մոտեցումը ուժերի և միջոցների բաշխմանը, կենտրոնացնելով դրանք ամենից առաջ սոցիալիստական շինարարության առաջատար մասներում:

Դաշնակից հանրապետությունների լուսաղկամատներին առաջարկվում ե՝ ապահովել դպրոցի միանձնյա կա-

ռավարման իրազրումը: Արհմիութեական կազմակերպություններին առաջարկվում ե՝ ցույց տալ ժողովրդական կրթության մարմիններին անհրաժեշտ ոգնություն այդ դրժում:

Դաշնակից հանրապետությունների լուսաղկամատները, կազմակերպելով պրակտիկ ոգնություն սովորողներին, միաժամանակ պետք ե բարձրացնեն ուսուցիչների պատասխանատվությունը դպրոցական աշխատանքի վորակի համար, ուշադրության առարկա դարձնելով ու խրախուսելով նվիրված և իրենց գործն իմացող ուսուցիչներին:

Յերեխանների ինքնավարության մարմինների աշխատանքը դպրոցում պետք ե դնել այնպիսի հիմքերի վրա, վոր գլխավորապես ուղղված լինելու հարձրացնելու ուսուցման վորակը և ամրապնդելու գիտակից կարգապահություն դպրոցում:

Կենտկոմը գտնում է, վոր այս վորշմամբ առաջարկված ինդիբների

կենսագործման համար, դաշնակից
հանրապետությունների լուսժող-
կոմատները պետք ե իրենց որդաննե-
րում վճռական պայքար մղեն այն
տարրերի. դեմ՝ վորոնք դիմադրում են
այս վորոշման մեջ նշված ուղղու-
թյամբ դպրոցի աշխատանքների մեջ
շրջադարձ կատարելու և ուսուցման
վարակը բարձրացնելու փոխարեն կամ
հրապուրվում են ամիս ֆրազներով,
կամ բաշում են դեպի յետ դեպի բուր-
ժուական դպրոցը :

Կենտկոմն ընդգծում է այն հան-
դամանքը, վոր գնալով ավելի ու ա-
վելի յե անոնք դպրոցի նշանակու-
թյունն ու դերը սոցիալիստական շի-
նարարության մեջ։ Կենտկոմն ստու-
դարկում է բոլոր կազմակերպություն-
ներին՝ մզել սիստեմատիկ անշեղ
պայքար դպրոցի աշխատանքի ասպա-
րիզում կուսակցական քաղաքականու-
թյան ոպորտունիուտական աղավա-
դումների դեմ։ Պոլիտեխնիկ դպրոցի
կառուցման ճանապարհի գլխավոր
վտանգի՝ կուսակցության քաղաքակա-
նության աջ ոպորտունիուտական ա-

զավադումների դեմ պայքարի հաջո-
ղությունը, —աղավաղումներ, վորոնք
անում են դեպի դպրոցի հրաժարու-
մը պոլիտեխնիկացումից, դեպի հին
դպրոցի պահպանման փորձերը, դե-
պի թեորետիկ ուսուցման և պրակ-
տիկայի խզումը, —յենթագրում և
պայքարի ուժեղացում ընդդեմ «ձախ»
ոպորտունիուտական աղավաղումների,
ընդդեմ «գպրոցի մահացման» և ու-
սուցչի դերը նվաստացման թեորիա-
ների։

Կենտկոմը հրավիրում է բոլոր կու-
սակցական կազմակերպությունների
ուշադրությունն այն հանդամանքի
վրա, վոր անհրաժեշտ է վճռաբար ու
ժեղացնել ուշադրությունը դեպի մաս
սայական դպրոցը, ուսուցչի աշխա-
տանքը և դպրոցի ամենորյա կոնկ-
րետ դեկավարության ամբացումը։

ՏԱՐԱԿԱՆ ՈՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԾՐԱԳՐԻ ՅԵՎ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ
 (Համկումիուսի Կենտրոնի ոգասոսի
 25-ի վրաըումբ)

Համկ(բ)կ կենտրոնը գտնում է,
 վոր ՌՄՖԽՀ-ում վերջին տարում
 տարրական ու միջնակարգ դպրոցների
 աշխատանքում տեղի յեն ունեցել
 զգալի տեղաշարժեր, չնորհիվ ընդհանուր պարտադիր ուսում մտցնելուն և
 այն հանդամանքին, վոր դպրոցները,
 ուսումնական վորոշ պլանների ու դա
 սացուցակների հիման վրա, անցել են
 զիտությունների սիստեմատիկ յու-
 րացմանը: Մակայն դեռևս մինչև վեր-
 ջը չի վերացված դպրոցի արմատա-
 կան պահանջմանը, այն, վոր
 «դպրոցի ուսումը չի տալիս բավակա-
 նաչափ ծավալով՝ ընդհանուր-կրթա-
 կան գիտելիքներ, բավարար կերպով

չի լուծում տեխնիկումների ու բարձ-
 րագույն դպրոցների համար գիտու-
 թյան հիմունքներին (Փիզիկա, քի-
 միա, մաթեմատիկա, մայրենի լեզու,
 աշխարհագրություն և այլն) տիրապե-
 տող միանգամայն դրագետ մարդիկ
 ոլուրաստելու խնդիրը» (Համ. Կ(բ)կ
 կենտրոնի 31 թ. սեպտ. 5-ի վորո-
 շումը):

Քրա կարեվորագույն պատճառներն
 են՝ ծրագրերի թերությունները (մա-
 նալանդ դպրոցի յերկրորդ կոնցեն-
 տրի՝ 5-7 խմբակների համար), դըպ-
 րոցական աշխատանքի անբավարար
 մեթոդները, լուսժողկոմատների և
 նրանց տեղական օրգանների մեթոդիկ
 ղեկավարման թուլությունը, դպրո-
 ցում գոյություն ունեցող թույլ կար-
 դապահությունը, յերթեմն վորեւ-
